

ՀՀ Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ղեկավարի
2016 թվականի հաշվետվություն

Հարգելի ընկերներ, ավագանու անդամներ, հրավիրվածներ ես, Կողբավան համայնքի ղեկավարս, ներկայացնում եմ Ձեզ հաշվետվություն Կողբավան համայնքում 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ինչպես գիտեք Կողբավան համայնքն ունի բազում հիմնախնդիրներ, որոնցից հատկապես կառանձնացնեի խմելու ջրի բացակայության հարցը: Գյուղը խմելու ջրով ապահովելու հարցով զբաղվելուն զուգընթաց կազմակերպվում է համայնքի միջոցներով ջրի մատակարարումը հարևան Երվանադաշտ համայնքից՝ շաբաթական երկու անգամ խմելու ջուր է բաժանվում համայնքի բնակչությանն անվճար հիմունքներով:

Համայնքն անելիքներ ունի նաև կրթության բնագավառում, քանի որ Կողբավանի դպրոցահասակ երեխաները սեփական համայնքում դպրոց հաճախելու հնարավորությունից զրկված են: Դպրոցահասակ երեխաներին հարևան Վանանդ համայնք, որտեղ կազմակերպվում է նրանց ուսուցումը, հասցնելու համար ես հատկացված է ավտոմեքենա , որն առավոտյան տանում և դասերի ավարտից հետո ետ է բերում նրանց համայնք:

2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքներից ես կառանձնացնեի նաև հողօգտագործողների միջև ստացված ազոտական պարարտանյութերի՝ պարկը 6000 դրամ արժեքով պարկ, ինչպես նաև 5000 լիտր դիզելային վառելիքի՝ լիտրը 350 դրամ արժեքով բաշխումը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ցուցանիշների մասով .

Եկամուտների մասով պլանային առաջադրանքը կատարվել է 85,5 տոկոսով՝ պլանային 8702,4 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 7440,1 հազար դրամ եկամուտ, որն էլ ձևավորվել է հետևյալ ուղղություններից.

ՀՈՂԻ ՀԱՐԿ – պլանային առաջադրանքը կատարվել է 82,6 տոկոսով՝ տարեկան 2800,0 հազար դրամի դիմաց 2311,5 հազար դրամ հավաքագրվելով:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ գծով պլանային առաջադրանքը կատարվել է 55,9 տոկոսով , 185,0 հազարի դիմաց հավաքագրելով 103,4 հազար դրամ:

Համայնքի սեփականություն համարվող հողերի ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ - պլանային 1600,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 907,7 հազար դրամ : Պլանային առաջադրանքը կատարվել է 56,7 տոկոսով:

Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից կատարվել է մուտք 31,5 հազար դրամի չափով, ինչպես նաև վարչական գանձում 5,0 հազարի չափով:

Մուտքերը և եկամուտները կատարվել է պլանային
առաջադրանքը՝ 200,0 հազար դրամ կատարվել է պլանային

Համայնքին տրվել է դոտացիա 3912,4 հազար դրամի չափով:

2016 թվականի ընթացքում կատարվել են ծախսեր հետևյալ կտրվածքով՝

Աշխատավարձ՝ 6359,9 հազար դրամ:

Կատարվել է էլէկտրգիայի վարձավճար 61,0 հազար դրամի չափով:

Համակարգչային ծառայություններից օգտվելու համար ծախսվել է 14,0 հազար դրամ:

Կապի ծառայություններից օգտվելու համար վճարվել է 40,7 հազար դրամ:

Գործուղման ծախսեր՝ 29,0 հազար դրամ:

Տրանսպորտային նյութերի ձեռք բերման համար ծախսվել է 490,0 հազար դրամ:

Փողոցային լուսավորության անխափան ընթացքն ապահովելու համար կատարվել է ընթացիկ նորոգում 50,0 հազարի չափով:

Քարտեզագրական ծախսերի համար հատկացվել է 30,0 հազար դրամ:

Տրանսպորտային սարք և սարքավորումների ձեռք բերման նպատակով ֆոնդային բյուջեից ծախսվել է 207,0 հազար դրամ :

Համայնքի հիմնախնդիրներն են, ինչպես արդեն նշվեց.

1. Խմելու ջրի բացակայությունը
2. Կրթության բնագավառում դպրոցաշինությունը
3. Գազաֆիկացումը

Համայնքի ղեկավար




Ս. Մերոբյան